ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ VIII, № 5, 1955 Биол. и сельхоз. науки

ՀԱՄԱՌՈՏ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ժ. Ա. Այուցց

ԱՄՈՐՖԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆԿԱՐԿՆԵՐՈՒՄ

Ամորֆան (Amorpha fruticosa L.) *հյուսիս-ամերիկյան ծագում ունեցող թփատեսակ է, որը ՍՍՌՄ-ի մի շարք շրջաններում հաճախ օգտագործվում է անտառացման և կանաչազարդման նպատակով։*

Ամորֆան 2—5 մ բարձրությամբ անձև թուփ է, բնութագրվում է մի շարք արժեքավոր բիոլոգիական հատկություններով, որոնց շնորհիվ նա ունի որոշ անտառ-մելիորատիվ նշանակություն։ Դրանք են՝ անպահանջկոտություն հողային պայմանների նկատմամբ, բարձր երաշտադիմացկունություն, ադոդիմացկունություն և արագ աճում։ Որպես թիթեռնածաղկավորների ենթարտանիքին պատկանող թփատեսակ, ամորֆան ընդունակ է բարձրացնելու հողի բերրիությունը, հարստացնելով հողը ազոտով։

Նպատակ չունենալով հերքել ամորֆայի այս հանրածանոթ արժեքավոր հատկությունները, մենք անհրաժեշտ ենք համարում նշել նրա բիոլոգիական մի հատկություն ևս, որը, մեր դիտողությունների համաձայն, բացասական դեր ունի։ Այս թփատեսակը հարավային շրջաններում, ոռոգման պայմաններում, ցուցաբերում է վեգետատիվ և սերմնային վերանորոգման չափազանց մեծ ընդունակություն։ Բույսը պտղաբերում է շատ առատ և ամեն տարի։ Ամորֆան շատ ուժեղ և արագ բազմանում է նաև արմատային մացառներով, տալով մեծ աճ (ամորֆայի տարեկան աճը Երևանի պայմաններում հասնում է 1—1,5 մ)։ Ամորֆան ընդունակ է մի քանի տարվա ընթացքում մեկ թփից կազմելու անանցելի մացառուտներ, որոնց տարածման արամագիծը չափվում է մետրերով և տասնյակ մետրերով։

Այսպիսով, վտանգ է ստեղծվում հարևան ավելի արժեքավոր թփային և ծառային տեսակների նորմալ զարգացման համար և այդ վտանգն առավել ևս մեծանում է շնորհիվ նրա շատ ուժեղ տարածվող արմատային սիստեմի։

Մեր դիտողությունները ցույց են տալիս, որ Երևանի անտառային տնտեսության տնկարկներում, որոնք տեղադրված են քաղաքը շրջապատող սարալանջերում, ամորֆան արդեն դարձել է մի մոլախոտ, մի վնասակար բույս։ Այս պատճառով անտառային տնտեսությունը պայքարի միջոցներ է ձեռք առնում նրա դեմ՝ հատելով ամորֆայի մացառները։ Նկատի ունենալով, որ հատումը կատարվում է պտղակալումից հետո, իսկ ամորֆան հատումից հետո ընդունակ է տալու շատ ուժեղ վեգետատիվ վերա-

ճում, նշված պայքարը պետք է համարել շատ թույլ և ոչ արմատական։ Պայքարի էֆեկտիվ եղանակ պետք է համարել մացառուտներն արմատախիլ անելը կամ թե հատելը և հեռացնելը նախքան պտղակալումը։

Ահա մի քանի թվական տվյալներ մեր դիտողություններից, որ մենք կատարել ենք Երևանի անտառատնտեսության Նորքի տեղամասում։

Ամորֆայի մայրական թփից մեկ քառակուսի մետրի վրա գտել ենք այդ թփատեսակի սերմային ծագում ունեցող տարբեր հասակի 78 բուսակ, իսկ 30 մ հեռավորության վրա 57 բուսակ։ Այս թվերը ցույց են տալիս ամորֆայի սերմային վերանորոգման մեծ աճը։

Հաճախ կարելի է տեսնել ամորֆայի մացառներում աճած կաղնու և այլ տեսակների բնական վերանորոգման (ինքնացանքի) ոչնչացում, քանի որ ամորֆան այդ տեսակների բուսակներին զրկում է լույսից, խոնավությունից և սննդից։

Նկատի ունենալով այս բոլորը, մենք անհրաժեշտ ենք համարում սահմանափակել ամորֆայի օգտագործումը ռեսպուբլիկայի տափաստանային ու նախալեռնային շրջաններում կատարվող նոր անտառային մելիորատիվ և դաշտապաշտպան աշխատանքներում։

Մեր կարծիքով, ամորֆան հնարավոր է սահմանափակ քանակությամբ աճեցնել այն ամայի, քարքարոտ և սահասարակ անբարենպաստ հողագրունտային պայմաններ ունեցող տարածություններում միայն, որտեղ այլ ծառատեսակներ չեն կարող աճել։ Այստեղ ամորֆան, որպես լավ հակաէրոզիոն տեսակ կկատարի իր դրական դերը, կպայքարի հողի լվացման դեմ, միաժամանակ հարստացնելով այն։

Հայկական Գյուղատնտեսական
ինստիտուտ

Ստացվել է 22 XII 1954

Ж. А. Айунц

Значение аморфы кустарниковой в ереванском зеленом кольце

Резюме

Аморфа легко распространяющаяся как семенами, так и вегетативным путем кустарниковая порода.

Один высаженный куст быстро дает обильную поросль от корней и дички от семян. Все это сильно засоряет площади, занятые другими, более ценными древесными и кустарниковыми породами.

Именно поэтому Ереванский лесхоз ведет усиленную борьбу против ее распространения. Однако эта борьба неэффективна, т. к. аморфа вырубается после обсеменения значительной площади вокруг себя. Следует ее вырубать коренным образом до обсеменения.

В настоящей статье рекомендуется сажать аморфу на непригодных землях, где лучшие породы не могут расти.